

5.3. Անտառայաջտպանության, անտառտնտեսական աշխատանքների և անտառախախտումների մասին

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության ամփոփ տեղեկատվության, 1999թ. կատարվել է անտառապաթուղգիական ուսումնասիրություն 11.0 հազ. հեկտարի վրա նախորդ տարվա 6.6 հազ. հեկտարի դիմաց: Վերգետնյա քիմիական պայքարի միջոցառումներ են կատարվել 1010 հեկտարի վրա նախորդ տարվա 2.4 հազ. հեկտարի դիմաց: Չորացած անտառտնկարկների և անտառմշակաբույսերի տարածքը կազմել է 50 հեկտար, 1998թ. 22.3 հեկտարի դիմաց:

1999թ. անտառի վնասատուների և հիվանդությունների օջախները տարեսկզբին կազմել են 26.5 հազ. հեկտար, դրանք բոլորը պահանջել են պայքարի միջոցառումներ: Տարվա ընթացքում պայքարի միջոցառումներ են կատարվել 930 հեկտար վարակված անտառտարածքների վրա: Վնասատուների ու հիվանդությունների օջախները տարեվերջին կազմել է 35.5 հազ. հեկտար (1998թ.՝ 26.2):

1998թ. համեմատ տերևակեր վնասատուներով ընդգրկված անտառտարածքներն ընդլայնվել են 10.2 հազ. հեկտարով և տարեվերջին կազմել 23.2 հազ. հեկտար, որը պայքարի միջոցառումներ պահանջող տարածքների 82.1%-ն է կրծողներով ընդգրկված տարածքը կրճատվել է 650 հեկտարով և տարեվերջին կազմել 10.4 հազ. հեկտար, որի 40.6%-ը պահանջում է պայքարի միջոցառումներ: Անտառային հիվանդություններով օջախները նախորդ տարվա համեմատ նվազել է 80 հեկտարով և կազմել 1570 հեկտար, որի 31.8%-ը պայքարի միջոցառումներ պահանջող անտառտարածքներն են:

Հաշվետու տարում իրականացված անտառտնտեսական աշխատանքների ծավալը կազմել է 341.0 մլն դրամ նախորդ տարվա 381.6 մլն. դրամի դիմաց: Կատարված բոլոր աշխատանքները տնտեսական եղանակով են:

1999թ. կատարվել են 20.2 մլն. դրամի անտառչինարարական աշխատանքներ: Կանաչ գոտիների բարեկարգում կատարվել է 86 հեկտար տարածքի վրա, որի համար ծախսվել է 430.0 հազ. դրամ:

1999թ. արձանագրվել է անտառախախտումների 2052 դեպք 1998թ.-ի 1776-ի դիմաց: Վնասի ընդհանուր գումարն, ըստ անտառախախտման ակտերի, կազմել է 52.4 մլն. դրամ, որի 24.2 %-ն կամ 12.7 մլն. դրամն անտառախախտողների կողմից մինչև 01.01.2000թ. կամավոր մուծվել է: Ընդհանուր անտառախախտումների 21.7%-ի կամ 445 դեպքերի քննությունը հանձնվել է իրավապահ մարմիններին, իսկ 25.5%-ի կամ 524 դեպքերի քննությունը հանձնվել է վարչական հանձնաժողովներին: Ըստ անտառախախտման ուղղությունների վերականգնված ընդհանուր գումարը կազմել է 17.2 մլն. դրամ, որի 26.3%-ը կամ 4.5 մլն. դրամը վերականգնվել է ըստ վճիռների:

Արձանագրվել է 1931 ապօրինի անտառհատումներ: Հատվել է 14841 ծառ, հատված փայտանյութը կազմել է 6.2 հազ. խոր. մ: Ապօրինի անտառհատումներից վնասը կազմել է ընդհանուր անտառախախտումներից հասցված վնասի 98.7%-ը կամ 51.8 մլն. դրամ: Դրա 24.0%-ը կամ 12.4 մլն. դրամը կամավոր մուծվել է ըստ անտառախախտման ակտերի: Ապօրինի անտառհատումների դեպքերը կազմել են իրավապահ մարմիններին և վարչական հանձնաժողովներին հանձնված անտառախախտումների ընդհանուր դեպքերի 98.0% ՝ ³ 0 950 ՝ ¹ ձև: Վերականգնված գումարը կազմել է 16.9 մլն. դրամ կամ վճռված ընդհանուր տուժազումարի 32.7%-ը:

Արձանագրվել է անասունների չթույլատրված արածեցման 89 դեպք 1998 թ.-ի 103 -ի դիմաց: Չթույլատրված տարածքում արածեցվել է 889 գլուխ անասուն 1998թ.-ի 1427-ի դիմաց, վնասի գումարը կազմել է 586.9 հազ դրամ կամ անտառախախտումների ընդհանուր վնասի 1.1%-ը: Իրավապահ մարմիններին և վարչական հանձնաժողովներին հանձնված այդպիսի 17 դեպքի առնչությամբ վերականգնված գումարը կազմել է զանձման ենթակա ընդհանուր գումարի 49.1%-ը կամ 288.3 հազ. դրամ:

Արձանագրվել է անտառային տարածքի հողազավթման 29 դեպք, զավթված տարածքը կազմել է 1.3 հեկտար, վնասի գումարը՝ 78 հազ. դրամ, որի 6.9%-ը կամ 5.4 հազ. դրամը կամավոր մուծվել է հողազավթողների կողմից: Իրավապահ մարմիններին հանձնված 2 դեպքի առնչությամբ վերականգնվել է զանձման ենթակա վնասի գումարի 22.3%-ը կամ 17.4 հազ. դրամ:

Արձանագրվել է անօրինական խոտհունձի 3 դեպք, ընդգրկված տարածքը՝ 0.2 հեկտար: Վնասը կազմել է 8.6 հազ. դրամ, որի 65.1 %-ը կամ 5.6 հազ. դրամը կամավոր մուծվել է ըստ անտառխախտման ակտերի: